# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 93 - Լ

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 5-րդ մասը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Հաստատել.

1) Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կիրառելու մասին որոշման ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշման ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Ընտանեկան և կենցաղային գործադրած անչափահաս կամ անգործունակ անձի

նկատմամբ նախազգուշացում կիրառելու մասին որոշման ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության կողմից ներկայացված հայտերին համապատասխան ապահովել սույն հրամանով հաստատված ձևաթղթերի տպագրումը:

3. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

***Ա. ՍԱՐԳՍՅԱՆ***
***22.12.2025թ.***
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ**
**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«22» դեկտեմբերի 2025թ.
N 93 - Լ հրամանի

« » 20 թ. ժամը « » ______________________ ____________
/ստորաբաժանման անվանումը/ /վայրը/

# ՈՐՈՇՈՒՄ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝ ______________________________

______________________________

______________________________

______________________________
/ստորաբաժանման անվանումը, ոստիկանության ծառայողի պաշտոնը, անունը, ազգանունը/

______________________________

______________________________

հիման վրա
______________________________
/ դեպքի հայտնաբերման հիմքը, ահազանգի ստացման կամ այլ հիմքի առաջացման տարեթիվը, ամիսը, օրը, ժամը,/

**Պարզեցի՝**

**1. Դեպքի փաստական հանգամանքները** ______________________________

______________________________
/ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, տարիքը, հասցեն, դեպքի վայրը, ժամանակը, ձեռք բերված յուրաքանչյուր ապացույցի հիման վրա դեպքի հանգամանքների մանրամասն նկարագրությունը/

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**2. Վերաբերելի իրավական կարգավորումները**

2.1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն.

*«1. Ընտանեկան և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը կամ անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև՝ անկախ նրանց համատեղ բնակվելու հանգամանքից:*

*2. Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակներն են՝*

*1) **ֆիզիկական բռնություն**՝ անձի կամքին հակառակ՝ ֆիզիկական բնույթի արարքը, ներառյալ՝ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությունը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, վտանգի մեջ թողնելը, մարդուն առևանգելը.*

*2) **սեռական բռնություն**՝ անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողությունները, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները.*

*3) **հոգեբանական բռնություն**՝ անձին հոգեբանական ճնշում, հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության պարբերաբար նվաստացումը, հարազատ երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումներն արգելելը կամ դրանք խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, ֆիզիկական, տնտեսական բռնություն գործադրելու, տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ*

*հարազատի կամ զուգընկերոջ կամ ընկերոջ կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինքնասպանությանը հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը, հետամտելը.*

*4)* ***տնտեսական բռնություն****՝ անձին հարկադրված նյութական կախվածության մեջ դնելը, նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սննդից, հագուստից, կացարանից, դեղից, հիգիենիկ պարագաներից, օրենքով սահմանված նպաստից կամ կենսաթոշակից, այդ թվում՝ երեխայի համար տրամադրվող, աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից) զրկելը, անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից տնօրինվող գույքը վնասելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կամքին հակառակ՝ նրան վարկային կամ ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.*

*5)* ***անտեսում****՝ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:»*

2.2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.*

*1)* ***ընտանիքի անդամներ****՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), ծնողը (նաև խորթ ծնողը, որդեգրողը, խնամատար ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն), երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրողի ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը.*

*(...)*

*10)* ***զուգընկեր****՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:»:*

2.3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքը տեղի է ունեցել առաջին անգամ, առկա չէ հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված*

*պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում:»:*

### 3. Որոշման ընդունման հիմնավորումները՝ փաստական հանգամանքների և կիրառելի իրավական կարգավորումների վերլուծությունը

/ձեռք բերված ապացույցների, օրինակ՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված և ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց, այլ վկաների ցուցմունքների, բռնության գործադրման փաստը հաստատող և հերքող լուսանկարների, տեսաձայնագրությունների, ձայնագրությունների, տեսագրությունների, տեղեկանքների, այլ ապացույցների վերլուծությունը, դրանց հիման վրա արձանագրված փաստերի համադրումը և ոստիկանության ծառայողի կողմից ապացուցված համարվող փաստերի նկարագրությունը, դեպքը ընտանեկան և կենցաղային բռնություն որակելու վերաբերյալ, ինչպես նաև նախազգուշացման կիրառման օրենսդրական հիմքերի առկայության վերաբերյալ պատճառաբանությունը, այդ թվում՝ բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին հիմնավոր ենթադրության բացակայության հիմնավորումը, եզրահանգումները/

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 6-րդ հոդվածով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

________________________________________

/ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի անունը, հայրանունը, ազգանունը/

<u>նկատմամբ կայացնել «Նախազգուշացում» կիրառելու մասին որոշում:</u>

Ինձ պարզաբանվել է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին, ինչպես նաև սույն որոշման բողոքարկման կարգը մեկամսյա ժամկետում՝ վերադասության կարգով և դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում, որի համար ստորագրում եմ

__________________________ /ստորագրությունը/

__________________________ /բռնություն գործադրած անձի անուն, ազգանուն,հայրանուն/

__________________________ /ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝ «      »________ 20    թ.

Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը ներկա չի գտնվել դեպքի վայրում և որոշման բովանդակությունը նրան պարզաբանվել է հեռախոսակապի միջոցով կամ ուղարկվել է պատճենը, որի համար ստորագրում եմ

| | | |
|---|---|---|
| ________________ | ________________ | ________________ |
| Որոշում կայացնողի պաշտոն, կոչում | ստորագրությունը | անունը, ազգանունը,հայրանունը |

Ստացա որոշման մեկ օրինակը՝ «      »________ 20    թ.

__________________________ /բռնության ենթարկված անձի անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն/

| | | |
|---|---|---|
| ________________ | ________________ | ________________ |
| Որոշում կայացնողի պաշտոն, կոչում | ստորագրություն | անուն, ազգանուն,հայրանուն |

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«22» դեկտեմբերի 2025թ.
N 93 - Լ հրամանի

«   »    20   թ.   ժամը «   »   ______________________   __________
/ստորաբաժանման անվանումը/   /վայրը/

# ՈՐՈՇՈՒՄ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ

Ես՝ ______________________________
______________________________
______________________________
______________________________
/ստորաբաժանման անվանումը, ոստիկանության ծառայողի պաշտոնը, անունը, ազգանունը/

______________________________
______________________________
______________________________
______________________________
______________________________ հիման վրա
/դեպքի հայտնաբերման հիմքը, ահազանգի ստացման կամ այլ հիմքի առաջացման տարեթիվը, ամիսը, օրը, ժամը/

**Պարզեցի՝**

**1. Դեպքի փաստական հանգամանքները**
/ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, տարիքը, հասցեն, դեպքի վայրը, ժամանակը, ձեռք բերված յուրաքանչյուր ապացույցի հիման վրա դեպքի հանգամանքների մանրամասն նկարագրությունը/
______________________________
______________________________
______________________________
______________________________
______________________________
______________________________
______________________________
______________________________

## 2. Վերաբերելի իրավական կարգավորումները

2.1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն.

*«1. Ընտանեկան և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը կամ անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև՝ անկախ նրանց համատեղ բնակվելու հանգամանքից:*

*2. Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակներն են՝*

*1) **ֆիզիկական բռնություն**՝ անձի կամքին հակառակ՝ ֆիզիկական բնույթի արարքը, ներառյալ՝ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությունը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, վտանգի մեջ թողնելը, մարդուն առևանգելը.*

*2) **սեռական բռնություն**՝ անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողությունները, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները.*

*3) **հոգեբանական բռնություն**՝ անձին հոգեբանական ճնշում, հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության պարբերաբար նվաստացումը, հարազատ երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումներն արգելելը կամ դրանք խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, ֆիզիկական, տնտեսական բռնություն գործադրելու, տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի*

*գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ հարազատի կամ զուգընկերոջ կամ ընկերոջ կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ պատապանք պատճառելը, ինքնասպանության հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը, հետամտելը.*

*4)* ***տնտեսական բռնություն****՝ անձին հարկադրված նյութական կախվածության մեջ դնելը, նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սննդից, հագուստից, կացարանից, դեղից, հիգիենիկ պարագաներից, օրենքով սահմանված նպաստից կամ կենսաթոշակից, այդ թվում՝ երեխայի համար տրամադրվող, աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից) զրկելը, անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից տնօրինվող գույքը վնասելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կամքին հակառակ՝ նրան վարկային կամ ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.*

*5)* ***անտեսում****՝ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:»*

2.2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.*

*1)* ***ընտանիքի անդամներ****՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), ծնողը (նաև խորթ ծնողը, որդեգրողը, խնամատար ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն), երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրողի ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը.*

*(...)*

*10)* ***զուգընկեր****՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:»:*

2.3. Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն.

*«1. Եթե ընտանիքի մեկ անդամը, զուգընկերը, ընտանիքի նախկին անդամը կամ նախկին զուգընկերը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի, զուգընկերոջ, ընտանիքի նախկին անդամի կամ նախկին զուգընկերոջ կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայող*

*անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում: Անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ նախազգուշացում ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, անձը կատարել է այնպիսի բռնի արարք, որը չի պարունակում հանցակազմի հատկանիշներ:*

*2. Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը սահմանվում է 20-25 օր: Եթե անհետաձգելի որոշման գործողության ընթացքում դատարանը քննում է պաշտպանական որոշման դիմում, ապա այն ուժի մեջ է մնում մինչև դատարանի կողմից որոշում կայացվելը:*

*3. Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները.*

*1) հարկադրել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին անհապաղ հեռանալ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածի բնակության տարածքից և արգելել այդտեղ նրա վերադարձը մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը.*

*2) արգելել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր.*

*3) արգելել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց), որն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը.*

*4) մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն ի պահ վերցնել բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը: Այս սահմանափակումը կիրառելիս որոշման մասին իրազեկելու պահին ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի տիրապետման տակ զենք լինելու դեպքում նա այն անհապաղ հանձնում է որոշումը կայացրած ոստիկանության իրավասու ծառայողին.*

*5) արգելել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց հետ:*

*4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ՝ նշելով դրանց կատարման համար միևնույն կամ տարբեր ժամկետներ: Սահմանափակման միջոցներն ընտրելիս որոշում կայացնողն առաջնորդվում է սույն օրենքով սահմանված սկզբունքներով՝ ապահովելով սահմանափակման համաչափությունը:*

*(...)»:*

## 3. Որոշման ընդունման հիմնավորումները՝ փաստական հանգամանքների և կիրառելի իրավական կարգավորումների վերլուծությունը

/ձեռք բերված ապացույցների, օրինակ՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված և ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց, այլ վկաների ցուցմունքների, բռնության գործադրման փաստը և բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն վտանգի առկայությունը հաստատող և հերքող լուսանկարների, տեսաձայնագրությունների, ձայնագրությունների, տեսագրությունների, տեղեկանքների, այլ ապացույցների վերլուծությունը, դրանց հիման վրա արձանագրված փաստերի համադրումը և ոստիկանության ծառայողի կողմից ապացուցված համարվող փաստերի նկարագրությունը, դեպքը ընտանեկան և կենցաղային բռնություն որակելու վերաբերյալ, ինչպես նաև անհետաձգելի միջամտության որոշման կիրառման օրենսդրական հիմքերի առկայության վերաբերյալ պատճառաբանությունը, **այդ թվում՝**

**բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին հիմնավոր ենթադրության առկայության հիմնավորումը,** եզրահանգումները/

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածով

# ՈՐՈՇԵՑԻ

______________________________

/ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի անունը, հայրանունը, ազգանունը/

նկատմամբ կիրառել Անհետաձգելի միջամտություն որոշում՝ « » օր ժամկետով և վերջինիս նկատմամբ կիրառել հետևյալ սահմանափակումները՝

1. ______________________________

______________________________

______________________________

______________________________

2. ______________________________

______________________________

______________________________

3. ______________________________

______________________________

______________________________

4 ______________________________

______________________________

______________________________

5. ______________________________

______________________________

Ինձ պարզաբանվել է անհետաձգելի միջամտության որոշման պահանջները խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին, ինչպես նաև սույն որոշման բողոքարկման կարգը հնգօրյա ժամկետում՝ վերադասության կարգով և դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում, որի համար ստորագրում եմ

______________________ ______________________

/ստորագրությունը/ /բռնություն գործադրած անձի անուն, ազգանուն, հայրանուն/

______________________

/ստորագրությունը/ Ստացա որոշման մեկ օրինակը՝ « »_________ 20 թ.

Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը ներկա չի գտնվել դեպքի վայրում և որոշման բովանդակությունը նրան պարզաբանվել է հեռախոսակապի միջոցով կամ ուղարկվել է պատճենը, որի համար ստորագրում եմ

______________________ ______________________ ______________________

Որոշում կայացնողի պաշտոն, կոչում ստորագրությունը անունը, ազգանունը,հայրանունը

Ստացա որոշման մեկ օրինակը՝ « »_________ 20 թ. ______________________

/բռնության ենթարկված անձի անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն/

______________________ ______________________ ______________________

Որոշում կայացնողի պաշտոնը, կոչումը /ստորագրությունը/ /անուն, ազգանուն, հայրանուն/

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«22» դեկտեմբերի 2025թ.
N 93 - Լ հրամանի

«   »   20   թ.   ժամը «   »   ____________________   __________
/ստորաբաժանման անվանումը/   /վայրը/

# ՈՐՈՇՈՒՄ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝ ____________________
____________________
____________________
____________________
/ստորաբաժանման անվանումը, ոստիկանության ծառայողի պաշտոնը, անունը, ազգանունը/

____________________
____________________
____________________
____________________
____________________
____________________ հիման վրա
/դեպքի հայտնաբերման հիմքը, ահազանգի ստացման կամ այլ հիմքի առաջացման տարեթիվը, ամիսը, օրը, ժամը,/

**Պարզեցի՝**

**1. Դեպքի փաստական հանգամանքները** ____________________
____________________
/ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, տարիքը, հասցեն, դեպքի վայրը, ժամանակը, ձեռք բերված յուրաքանչյուր ապացույցի հիման վրա դեպքի հանգամանքների մանրամասն նկարագրությունը/

____________________
____________________
____________________
____________________
____________________
____________________
____________________
____________________
____________________
____________________

## 2. Վերաբերելի իրավական կարգավորումները

2.1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն.

*«1. Ընտանեկան և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը կամ անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև՝ անկախ նրանց համատեղ բնակվելու հանգամանքից:*

*2. Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակներն են՝*

*1) **ֆիզիկական բռնություն**՝ անձի կամքին հակառակ՝ ֆիզիկական բնույթի արարքը, ներառյալ՝ բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական բնույթի միջամտությունների ենթարկվելուն պարտադրելը, բժշկական օգնություն ստանալուց զրկելը կամ նման օգնությունը խոչընդոտելը, ֆիզիկական ցավ պատճառելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սպանությունը, առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, ֆիզիկական ներգործությունը, ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը, վտանգի մեջ թողնելը, մարդուն առևանգելը.*

*2) **սեռական բռնություն**՝ անձի կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողությունները, այդ թվում՝ անձի սեռական օրգաններին և մարմնի մասերին անցանկալի հպումները, անձին երրորդ անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններում ներգրավելը, կուսության ստուգումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները.*

*3) **հոգեբանական բռնություն**՝ անձին հոգեբանական ճնշում, հոգեկան տառապանք պատճառելը, ներառյալ՝ անձի ինքնագնահատականի և արժանապատվության պարբերաբար նվաստացումը, հարազատ երեխաների, ընկերների և հարազատների հետ շփումներն արգելելը կամ դրանք խոչընդոտելը, ինչպես նաև վերահսկողություն կիրառելը, ինքնավնասման կամ ինքնասպանության սպառնալիքով ճնշում գործադրելը, ֆիզիկական, տնտեսական բռնություն գործադրելու, տնային կենդանիներին վնասելու սպառնալիքը, դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ հարազատի կամ զուգընկերոջ կամ ընկերոջ կամ խնամքի տակ գտնվողի անվտանգության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի իմաստով՝ հոգեկան ներգործությունը կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինքնասպանությանը հասցնելը կամ հակելը, հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը, հետամտելը.*

*4) **տնտեսական բռնություն**՝ անձին հարկադրված նյութական կախվածության մեջ դնելը, նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սննդից, հագուստից, կացարանից, դեղից, հիգիենիկ պարագաներից, օրենքով սահմանված նպաստից կամ կենսաթոշակից, այդ թվում՝ երեխայի համար տրամադրվող, աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից) զրկելը, անձին սեփականության իրավունքով պատկանող կամ նրա կողմից տնօրինվող գույքը վնասելը,*

*սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կամքին հակառակ՝ նրան վարկային կամ ֆինանսական գործարքներում ներգրավելը, անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցները և գույքը կտակելուն կամ նվիրաբերելուն հարկադրելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.*

*5)* ***անտեսում՝*** *ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:»*

2.2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.*

*1)* ***ընտանիքի անդամներ՝*** *անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), ծնողը (նաև խորթ ծնողը, որդեգրողը, խնամատար ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն), երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրողի ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը (նաև համամայրը կամ համահայրը), ամուսնու քույրը, ամուսնու եղբայրը, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը.*

*(...)*

*10)* ***զուգընկեր՝*** *անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից:»:*

2.3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքը տեղի է ունեցել առաջին անգամ, առկա չէ հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, և անհետաձգելի միջամտության հիմքերն առկա չեն: Նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ներառում է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին իրազեկում: Նախազգուշացումը կիրառվում է դեպքի մասին տեղեկանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում:»:*

2.4. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

*«1. Անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում:»:*

## 3. Որոշման ընդունման հիմնավորումները՝ փաստական հանգամանքների և կիրառելի իրավական կարգավորումների վերլուծությունը

/ձեռք բերված ապացույցների, օրինակ՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված և ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց, այլ վկաների ցուցմունքների, բռնության գործադրման փաստը հաստատող և հերքող լուսանկարների, տեսաձայնագրությունների, ձայնագրությունների, տեսագրությունների, տեղեկանքների, այլ ապացույցների վերլուծությունը, դրանց հիման վրա արձանագրված փաստերի համադրումը և ոստիկանության ծառայողի կողմից ապացուցված համարվող փաստերի նկարագրությունը, դեպքը ընտանեկան և կենցաղային բռնություն որակելու վերաբերյալ, ինչպես նաև նախազգուշացման կիրառման օրենսդրական հիմքերի առկայության վերաբերյալ պատճառաբանությունը, եզրահանգումները/

________________________________________

________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 6-րդ և 12-րդ հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

________________________________________

/ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի անունը, հայրանունը, ազգանունը/

նկատմամբ կայացնել «Նախազգուշացում» կիրառելու մասին որոշում:

________________________________________________________________________________

Ինձ պարզաբանվել է բռնության շարունակման կամ կրկնման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին, ինչպես նաև սույն որոշման բողոքարկման կարգը մեկամսյա ժամկետում՝ վերադասության կարգով և դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում, որի համար ստորագրում եմ

_________________________ _________________________

/ստորագրությունը/ /բռնություն գործադրած անձի անուն, ազգանուն,հայրանուն/

_________________________

/ստորագրությունը/ Ստացա որոշման մեկ օրինակը՝ « »_________ 20 թ.

Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը ներկա չի գտնվել դեպքի վայրում և որոշման բովանդակությունը նրան պարզաբանվել է հեռախոսակապի միջոցով կամ ուղարկվել է պատճենը, որի համար ստորագրում եմ

_________________________ _________________ _________________________

Որոշում կայացնողի պաշտոն, կոչում ստորագրությունը անունը, ազգանունը,հայրանունը

Ստացա որոշման մեկ օրինակը՝ « »_________ 20 թ. _________________________

/բռնության ենթարկված անձի անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն/

_________________________ _________________ _________________________

| Որոշում կայացնողի պաշտոն, կոչում | ստորագրություն | անուն, ազգանուն, հայրանուն |
|---|---|---|